ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արայիկ Հարությունյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Բելառուս, Մինսկ 2019թ հունիսի 20-ից 22-ը

4. Հրավիրող Կողմը

Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի, ինչպես նաև կրթության նախարարները

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Եվրոպական երկրորդ խաղերի բացման արարողությանը և հունիսի 20-ից 22-ը Մինսկում կայացած կրթության նախարարների հանդիպմանը մասնակցելու նպատակով

6. ***Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը***

Այցի ընթացքում քննարկվել են մասնակից երկրների միջին մասնագիտական կրթության համակարգը, առկա խնդիրներն ու մարտահրավերները և դրանց լուծմանն ուղղված ռազմավարական ուղղությունները:

Պաշտոնական այցի շրջանակում հանդիպել եմ Բելառուսի Հանրապետության կրթության նախարար Իգոր Կորպենկոյի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության և համատեղ ծրագրեր իրականացնելու

հնարավորությունները: Քննարկվեցին միջին մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության հնարավորությունները:

Մինսկ այցի շրջանակներում հանդիպել եմ նաև ՌԴ լուսավորության նախարար Օ.Վասիլևայի հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

ԲՀ կրթության նախարարը հետաքրքրված էր Երևանում գործող Թումո ստեղծագործական կենտրոնի գործունեությամբ, երկակի դիպլոմների տրամադրման հնարավորությամբ, ակադեմիական փոխճանաչման և շարժունության հայաստանյան փորձով, ինչպես նաև Horizon 2020 ծրագրին մասնակցելու հնարավորությամբ:

ԲՀ կրթության նախարարը հայտնեց իր պատրաստակամության մասին աջակցելու, որպեսզի ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները մասնակցեն National Skills VET գործընթացներում: Քննարկվել են նաև ՄԿՈՒ ոլորտում օգտագործվող բելառուսական վարժասարքերի ձեռքբերման հնարավորությունները:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև "Дружба без границ" երիտասարդական ֆորումին մասնակցության հնարավորությունները, որը նախատեսվում է օգոստոսին:

ՌԴ կրթության նախարար Օ.Վասիլևայի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն մասնագիտական աջակցություն ցուցաբերելու ՌԴ դպրոցներում «շախմատ» առարկան ներդնելու, ինչպես նաև հանրակրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման փորձը փոխանցելու համար: Գործընկերները հետաքրքրված էին նաև հոկտեմբերի 6-9-ը Երևանում

կայանալիք IT Համաշխարհային խորհրդաժողովի (World Congress on Information Technology) մասին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Ելույթի ժամանակ առաջարկվել է երիտասարդների նորարարական մտքերի համար պլատֆորմի ստեղծում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը